ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

11 ՀՈՒՆԻՍԻ 2024 թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին՝ Սուրեն Միխայլովը, Զաիլ Նադոյանը, Դավիթ Վանյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝** Սուսաննա Ալեքսանովա, Ռադիկ Բենյամինով, Տոմա Իվանովա, Արտաշես Լալայան, Վալոդյա Խոջայան, Արտյոմ Ցակուրով

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ֆելիքս Միրզոևը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Նելլի Հարությունյանը**

Լսեցին

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ №06 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈԵՎ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի պահանջի՝

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել՝ համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 11-ի №06 արտահերթ նիստի օրակարգը՝

1) « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ » իրավաբանական անձանց միության Արզնի համայնքի անդամավճարի գումարը փոխանցելու մասին :

2) ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի 13-րդ փողոց 2/3 հասցեում գտնվող հողամասը, հողամասում առկա պարիսպը որպես համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

3) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաններ ստանալու նպատակով, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի համայնքի «Արզնի համայնքի ոռոգման

ներտնային ցանցի հիմնանորոգման աշխատանքների » ծրագրային հայտը հաստատելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 37/

Լսեցին
*«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ » ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՒՄԱՐԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*|Զեկ. ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈԵՎ|*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ կետի , 35-րդ հոդվածի 15-րդ կետի պահանջների .
Համայնքի ավագանին որոշում է՝

1.Թույլատրել Արզնի համայնքի բյուջեից փոխանցել 200000 / երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ » իրավաբանական անձանց միության Արզնի համայնքի անդամավճարի գումարը :
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 38/

Լսեցին
*ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆ 13-ՐԴ ՓՈՂՈՑ 2/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՐԻՍՊԸ ՃԱՆԱՉԵԼ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ*

*|Զեկ. ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈԵՎ|*

Համաձայն Հայաստանի Հանրապետության « Տեղական ինքնակառավարման մասին» 18-րդ հոդվածի 1-ին մասի 29, 42-րդ կետերի պահանջներին.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Կոտայքի մարզի Արզնի համայնքի 13-րդ փողոց 2/3 հասցեում գտնվող 07-016-0043-0059-ից կադաստրային ծածկագով0.0129 հա մակերեսով , հողամասը , հողամասում առկա 2.34 քմ նակերեսով պարիսպը ճանաչել որպես համայնքային սեփականություն:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 39/

Լսեցին

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ‹‹ԱՐԶՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՌՈԳՄԱՆ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ /ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ/ ››-Ի ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈԵՎ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի պահանջներին .

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաններ ստանալու նպատակով, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի համայնքի «Ոռոգման ներտնտեսային ցանցի հիմնանորոգման աշխատանքների / երկրորդ փուլ»-ի ծրագրային հայտը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 40/

Ավագանու անդամներ

ՍՈՒՍԱՆՆԱ ԱԼԵՔՍԱՆՈՎԱ

ՌԱԴԻԿ ԲԵՆՅԱՄԻՆՈՎ

ՏՈՄԱ ԻՎԱՆՈՎԱ

ԱՐՏԱՇԵՍ ԼԱԼԱՅԱՆ

ՎԱԼՈԴՅԱ ԽՈՋԱՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ՅԱԿՈՒԲՈՎ

*Համայնքի ղեկավար*

ՖԵԼԻՔՍ ՄԻՐԶՈԵՎ________________

*Նյութն արձանագրեց՝* Նելլի Հարությունյանը

________________________________